ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ

Դավթաշենի 3-րդ թաղ", (+374 11) 518-282,էլ" փոստ՝ davtashen@yerevan.am

№ 29/Ա/51118-24 «_05_» __09____ 2024 թ.

«ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԽԱԼԱԹՅԱՆԻՆ
(ՀՀ, Ք.ԵՐԵՎԱՆ, ՊՈՌՇՅԱՆ 1- ՆՐԲԱՆՑՔ, ՏՈՒՆ 74)

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Երևանի քաղաքապետարանի և «ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2023 թվականի օգոստոսի 14-ին կնքված «ԵՔ-ՀԲՄԽԾՁԲ-23/74» ծածկագրով ծառայությունների մատուցման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Դավթաշեն վարչական շրջանի **բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքների** որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

«ՀՏ-ՊՐՈԵԿՏ» ՍՊ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00229138) 2022 թվականի հունիսի 22-ից մինչև 2024 թվականի հունիսի 22-ը (*17.12.2022թ.-11.05.2023թ. հանվել է ցանկից՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի ԵԴ/ 32833/02/22 որոշման հիման վրա*) ներառված է գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնումների մասին ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև հաշվի առնելով, որ առկա են Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ մասի խախտման հիմքերը, Պայմանագիրը ենթակա է լուծման համաձայն Պայմանագրի 7.3 կետի.

«Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում

արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է»:

Հարկ է նշել, որ պայմանագրի գինը կազմում է 428000/չորս հարյուր քսանութ հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի 5 չափաբաժիններից վճարվել է միայն 5-րդ չափաբաժինը, որը կազմում է 90000/իննսուն հազար /ՀՀ դրամ, իսկ 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով վճարում չի իրականացվել, որոնք համապատասխանաբար կազմում են 1-ին չափաբաժին՝ 33000/ երեսուներեք հազար/ ՀՀ դրամ, 2-րդ չափաբաժին ՝ 130000/ մեկ հարյուր երեսուն հազար/ ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժին ՝ 120000/մեկ հարյուր քսան հազար/ ՀՀ դրամ և 4-րդ չափաբաժին՝ 55000 / հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ:

Հաշվի առնելով Պայմանագրի 7.3 կետը և ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով՝ Պատվիրատուն միակողմանի մասնակի (338000/երեք հարյուր երեսունութ հազար/ՀՀ դրամի մասով) լուծում է պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ բանկային երաշխիքների գումարների գանձման նպատակով:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող

քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման գումարները (Երևանի քաղաքապետարանի 900015211429 հաշվեհամարին), ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.

մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱԼԲԵՐՏ ՀՈՎԱՍԱՓՅԱՆ**

ֆինանսական բաժին
Կատարող՝ Ս. Ասատրյան
Հեռ. 011518285